Doi: 10.56737/2953-7843-2025.06-50

Տ. ՎԱՉԵ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՑԻՍՆ» ԵՐԿՈՒՄ ԵՒ ԴՐԱՆՑ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ[1]

Ա. ԿՐՈՆԸ ԵՒ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ներկայիս աշխարհում կրոնական հանդուրժողականության հարցի այժմեականությունը կապված է աճող բազմազանության (պլյուրալիզմ), համաշխարհայնացման (գլոբալիզացիա), ռեգիոնալիզմի[2] եւ կրոնական տարբեր բարդությունների ի հայտ գալու հետ։ Նման երեւույթների զարգացման պայմաններում էապես աճում է նաեւ կրոնական գործոնի նշանակությունը ժամանակակից հասարակության կյանքում։ Այս երեւույթը, ընդհանուր առմամբ, նոր չէ։ Պատմաբանները քաջատեղյակ են, որ հասարակական կյանքում կրոնական գործոնի կտրուկ աճը մշտապես պայմանավորված է պատմության շրջադարձային ընթացքով[3]։ Մարդկության զարգացման այսօրվա ընթացքը, որը թեւակոխել է զարգացածության նոր մակարդակ, նույնպես նշանակալի է հասարակական կյանքի վերընթացին ուղղված ջանքերով։ Ահա թե ինչու այսօր այդքան արդիական է տարբեր կրոնների ու դրանց հետեւորդների համագործակցության, կրոնական հանդուրժողականության հարցը[4]։

---

[1]* *Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025։ Էլ. հասցե՝* hayrvatche@gmail.com։

[2] *Տնտեսական, ընկերային, քաղաքական ու այլ խնդիրների ուսումնասիրում եւ լուծում տվյալ տարածաշրջանի հասարակության շահավետության դիրքերից. այս կապակցությամբ տե՛ս* Б. Райзберг, Л. Лозовский, Словарь современных экономических терминов, Москва, 2008, *էջ 316։*

[3] *Տե՛ս* А. Григоренко, Специфика религиозной толерантности, Истина и диалог. Сборник материалов XIII Свято-Троицких ежегодных международных академических чтений в Санкт-Петербурге, Санкт-Петербург, 2013, *էջ 12 (այսուհետ՝* А. Григоренко, Специфика религиозной толерантности*)։*

[4] *Նույն տեղում։*

«Տոլերանդություն» բառը (լատ. Tolerantia *բառից) որպես եզրույթ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել ԺԶ. դարում Եւրոպայում ու նախ եւ առաջ առնչվել է կրոնական հարցերին։ Հետագայում այն դառնում է լուրջ խնդիրների լուծման փնտրտուքի ճանապարհի անբաժանելի մասը, ինչպիսիք են՝ ազգային բնույթի հակամարտությունները, կրոնական եւ ազգային հարցերը եւ այլն։ Հայերենում «տոլերանդություն» եզրույթի համար՝ իբրեւ նույնիմաստ բառ, գործածվում է «հանդուրժողականություն» հասկացությունը։ Գիտական գրականության մեջ տոլերանդությունն առավել հաճախակի դիտվում է որպես բարոյա-գեղագիտական որակ։ Հանրագիտարանային բառարանում «տոլերանդություն» եզրույթը մեկնաբանվում է որպես՝*

1. Օրգանիզմի կարողություն, որն ի վիճակի է կրել իր շրջակա միջավայրի այս կամ այն գործոնի անբարենպաստ ազդեցությունը։

2. Հանդուրժողություն ուրիշի կարծիքի, հավատքի, պահվածքի հանդեպ[5]։

Իրականում, ճշմարիտ հանդուրժողականությունն արտահայտվում է միայն այն դեպքում, երբ մարդկանց միջեւ գոյություն ունի բաց եւ անմիջական շփում[6]։ Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1995 թ. հանդուրժողականության սկզբունքների վերաբերյալ հռչակագրի՝ հանդուրժողականությունն նշանակում է՝ «հարգանք, ընդունում եւ ճիշտ ընկալում մեր աշխարհի մշակույթի հարուստ բազմազանության, մեր ինքնաարտահայտման ձեւի եւ մարդկային անհատականության դրսեւորման կերպերին»[7]։ Այս սահմանումն ավելի քան ընդգրկուն է, որով ընկալելի է ներդաշնակություն բազմազանության մեջ գաղափարը, այսինքն՝ համբերատար վերաբերմունք այլ ազգությունների, տարբեր ռասաների, մաշկի տարբեր գույների, սեռի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության, լեզվի, կրոնի, քաղաքական մտքերի, հանրային ծագման նկատմամբ[8]։ Կրոնական հանդուրժողականությունը, ըստ էության, դրսեւորվում է երկու

---

[5] *Տե՛ս* Советский энциклопедический словарь, гл. ред. А. Прохоров, Москва, 1991, *էջ 1340։*

[6] William Bell, Dimensions of Tolerance: Defining Contemporary Attitudes and Practices in a Diverse World, Proceedings of Latvian Christian Academy, Vol. 2, Jūrmala, 2009, *էջ 181 (այսուհետ՝* William Bell, Dimensions of Tolerance*)։*

[7] *Տե՛ս* http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/toleranc.shtml

[8] *Տե՛ս* Религиозная Толерантность, историческое и политическое измерения, под редакцией А. Красикова и Е. Токаревой, Москва, 2006, *էջ 17 (այսուհետ՝* Религиозная толерантность, историческое и политическое измерения*).*

մակարդակով։ Առաջին՝ այն տարբեր կրոնների ու հարանվանությունների հետեւորդների, ինչպես նաեւ առհասարակ հավատացյալների ու անհավատների միջեւ համբերատար, հանդուրժող վերաբերմունքն է՝ խարսխված փոխադարձ հարգանքի սկզբունքին, միմյանց գոյությունը եւ գործունեությունն ընդունելու իրավունքին։ Եւ երկրորդ՝ բացի իշխող կրոնից, տարբեր կրոնական ուղղությունների գոյության իրավունքի ճանաչումն է[9] պետականորեն։ Կարելի է ամրագրել, որ հանդուրժողականության նվազագույն մակարդակը, ըստ էության, կազմում է համբերատարությունը, այսինքն՝ պատրաստ լինել ընդունելու գոյության իրավունքն այն մարդկանց, որոնց համոզումները եւ դրանց հետ կապված գործողություններն ուղղակիորեն չեն պարունակում միտվածություն ոչնչացնելու նույն հանդուրժողականության հիմքերը։ Հետեւապես, կարելի է արդարացիորեն ասել, որ հանդուրժողականությունը դառնում է արժեք միայն այն դեպքում, երբ նպաստում է մարդասիրական արժեքների բարգավաճմանը, այլապես անսահմանափակ հանդուրժողականությունն ամեն ինչում հակադրվում է համամարդկային արժեհամակարգին[10]։

Մարդ արարածին հաճախ հատուկ է այն վարվելակերպը, որը հիմնված է «յուր-օտար» կենսաբանական սկզբունքի վրա, սակայն նման մարդկային բնութենական վիճակի հաղթահարումը մարդկանց տարանջատում է կենդանիներից[11]։ Աշխարհիկ մշակույթը, ի տարբերություն կրոնականի, այս առումով համեմատաբար հանդուրժող է ու առավել հնարավորություն ունի ընդունելու «օտարի» արժեքները, հայացքները, վարվելակերպը եւ վերածելու դրանք հավասարազոր «իր» արժեքներին, հայացքներին, վարվելակերպին, քանի որ աշխարհիկ մշակույթի արժեքային համակարգը չունի նվիրապետական կարծրացած կառուցվածք, այսինքն՝ իր հիմքում ընկած է արժեքների ու մտքերի բազմազանության սկզբունքը, ինչը հանգեցնում է յուրաքանչյուր գաղափարի ու ճշմարտության ընդունմանը[12]։ Այդ պատճառով աշխարհիկ մշակույթը դիտարկ-

---

[9] Տե՛ս А. Григоренко, «Свой-чужой» в истории религии, Известия Российского государственного педагогического университета им. А. Герцена, 2012, № 146, էջ 45։

[10] Տե՛ս С. Ильинская, Философско-методологические подходы к изучению категории «толерантность», Философско-политический ежегодник, Вып. 1, Москва, 2008, էջ 154։

[11] Տե՛ս «Религиозная Толерантность: историческое и политическое измерения», Academia, 2006, էջ 17։

[12] Տե՛ս А. Григоренко, Специфика религиозной толерантности, էջ 13։

վում է որպես «հանդուրժողականություն ուրիշի կարծիքի, հավատքի եւ վարվելակերպի նկատմամբ»[13]։

Սակայն կրոնական հանդուրժողականությունն իրենից ներկայացնում է այլ իրողություն։ Այն նշանակում է զուտ բացակայություն այն արտահայտությունների կամ գործողությունների, որոնք կարող են գնահատվել որպես նվաստացուցիչ կամ վիրավորական այլ կրոնի ներկայացուցչի նկատմամբ եւ կարող են միտված լինել վերջինս հավատքի իրավունքն ու ազատությունը ճնշելուն։ Հետաքրքրական է նշանավոր ռուս կրոնական փիլիսոփա, պատմաբան Լ. Պ. Կարսավինի դիտարկումը կրոնական հանդուրժողականության էության մասին. «Կրոնական հանդուրժողականությունը չի կարող հասնել բոլորի կողմից նույն արժեքների ճանաչմանը՝ անգամ հակառակ գնալով կրոնական ուսմունքին։ Այդ պարագային այն կվերածվի կրոնական հանդուժողականությունից ոչ կրոնական անտարբերության։ Իսկ դավանաբանական-տեսական հանդուրժողականության մասին խոսելը միանգամայն անիմաստ է։ Կարելի է սոսկ խոսել գործնական բարոյական հանդուրժողականության մասին, այսինքն՝ սկզբունքորեն զսպել այլահավատների նկատմամբ ճնշում գործադրելը»[14]։ Յուրաքանչյուր կրոնական մշակույթ, ի տարբերություն աշխարհիկ մշակույթի, կառուցվածքային կարծր համակարգ է՝ իր մեկ եւ միակ սրբազան կենտրոնով, ինչը յուրաքանչյուր կրոնում ընկալվում է յուրովի։ Այս իմաստով կրոնը, ինքնըստինքյան, չի կարող լինել հանդուրժող, ինչպես կարելի է ասել աշխարհիկ մշակույթի, աշխարհիկ հանդուրժողականության վերաբերյալ։

Կրոնական անհանդուրժողականության ձեւավորումը, ըստ էության, առաջ է բերում հավակնություն տվյալ կրոնի «բացարձակ ու բացառիկ» լինելու վերաբերյալ։ Սա նշանակում է, որ «յուրաքանչյուր կրոնին հատուկ է ճշմարտության եւ աշխարհի ընկալման բացարձակություն։ Կրոններից յուրաքանչյուրը հավակնում է լինել միակ ճշմարիտ եւ ուղիղ հավատքը, ու նրանցից յուրաքանչյուրը պահանջում է, որ իրեն ընդունեն իբրեւ այդպիսին։ Սակայն հարյուրամյակների ընթացքում ճշմարտության բացարձակ բնույթը, որը պահպանում էր ամեն մի կրոն, առաջ

---

[13] *Նույն տեղում։*

[14] *Տե՛ս* Л. Карсавинъ, Католичество, Петроградъ, 1918, *էջ 52 (այսուհետեւ՝* Л. Карсавинъ, *նշ. աշխ.)։*

բերեց կրոնական հավանություն՝ անհանդուրժողականության եւ ստորադասման առումով։ Այլեւս վեհ ճշմարտություններն ու նպատակները, որոնք ընդունվել էին կրոնական ավանդությամբ, նշանակալի կերպով խոչընդոտ հանդիսացան հանդուրժողականության համար՝ դառնալով հակադիր բեւեռներ հավատքի եւ դրա կենսագործունեության միջեւ»[15]։

Կրոնական անհանդուրժողականության պատճառներն ու առիթները մշտապես տարբերվել են բազմատեսակությամբ։ Կրոնական անհանդուրժողականությունը սովորաբար ուղղված է հետեւյալ «թիրախներին».

Կրոնական ուղղություն, որը հակամարտության կամ հակադրության մեջ է գտնվում տվյալ հասարակության ավանդական սովորույթների եւ հոգեւոր-բարոյական արժեքների հետ։

- Կրոնական ուղղություն, որ մեղադրելի է որպես հասարակության հիմքերը խարխլող, քանի որ տվյալ կրոնական ուսմունքն սպառնում է այս կամ այն քաղաքական գաղափարին կամ քաղաքական գծին (օրինակ՝ քրիստոնյաների՝ հռոմեական կայսերն իբրեւ աստված չընդունելու իրողությունը)։
- Կրոնական ուղղություն, որն օտար է համարվում այն մշակութային միջավայրի համար, որի մեջ նա զարգանում է։
- Եւ վերջապես, կրոնական ուղղություն, որը նույնացվում է օտար պետության հետ[16]։
- Յուրաքանչյուր կրոնի «բացարձակ ու բացառիկ» լինելու հանգամանքը, այսինքն՝ իր հավատքի նկատմամբ բացարձակ ու բացառիկ մոտեցումն անցյալում կրոնական հիմք է հանդիսացել այլ կրոնների նկատմամբ դրսեւորվող անհանդուրժողության համար. չէ՞ որ ամեն կրոն պահանջում է, որ ճանաչվի ճշմարիտ եւ միակ հավատք։ Ձգտելով այդ կարգավիճակին՝ կրոնները հաճախ կիրառել են տարբեր միջոցներ, այդ թվում եւ հարկադրանք։ Այսպիսով իր ուսմունքին բացարձակություն հաղորդելու ճանապարհին կրոնի հավակնությունները վերածվել են այլ կրոնների ստորադասման նախադրյալների։ Կրոնական անհանդուրժողականությունը եւ տարաձայնությունն իբրեւ հետեւանք առաջ բերեցին այլ կրոնական համայնքի դավանած ճշմարտության իրավունքի մերժում, եւ պարզապես դրա գոյության անհնարինություն։ Այդպիսի

---

[15] Տե՛ս Диа-Логос. Религия и Общество, Москва, 1997, էջ 13։

[16] Տե՛ս նույն տեղում։

անհասկացողությունն սկզբնապես վերածվեց թշնամանքի, իսկ հետո՝ ճնշումների, հալածանքների եւ, ի վերջո, կրոնական պատերազմի, որի արյունալի մարտերի ժամանակ միմյանց դեմ դուրս եկան տարբեր կրոնների հետեւորդներ, ինչպես տեղի ունեցավ խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում[17]։

Շատ հաճախ կրոնի նույնականացումն ազգության հետ ծնել է քաղաքական անհանդուրժողականություն, քանի որ պետության մեջ գերակայող կրոնի առնչությամբ անհամաձայնություն արտահայտել նշանակում է մեղադրվել պետության դեմ հանցանքի մեջ։ Այսպես, Հին Իսրայելի անհանդուրժողական կեցվածքն օտար կրոնի կուռքերի նկատմամբ պայմանավորված էր նրանով, որ հրեաներն Իսրայելի միասնությանն սպառնացող վտանգ էին տեսնում վերջիններիս մեջ։ Հին Հունաստանում անաստվածության կամ աստվածամերժ հայացքներ ունենալը եւ դրանք քարոզելը համարվում էր հանցավոր արարք, քանի որ այդ ձեւով մերժվում էին պետական աստվածները, ինչն ընկալվում էր իբրեւ քաղաքական անվստահության դրսեւորում։ Աթեիստները Հին Հունաստանում ենթարկվում էին հետապնդումների, նրանց նկատմամբ դատական գործեր էին հարուցվում[18]։

Այս վիճակը պահպանվում է մինչեւ այն պահը, քանի դեռ կրոնը շարունակվում է նույնականացվել պետության հետ՝ հանդիսանալով հայրենասիրական ու ազգային գիտակցության արտահայտիչը։ Օտար կրոնի ներթափանցումը դիտվում էր որպես վտանգ ազգային համախմբման, պետական միասնականության համար։ Պետական միասնության պաշտպանությունը չափազանց կարեւոր առաջադրանք էր համարվում ո՛չ միայն հին աշխարհում, այլ, գործնականում, մարդկության պատմության ողջ ընթացքում։ Ինչպես հին ժամանակներում, այնպես եւ միջնադարում քաղաքական իշխանությունը կրում էր սրբազան կերպարանք, այսինքն՝ իշխանությունն ընկալվում էր՝ վեհ ու աստվածային ծագում եւ նշանակություն ունեցող իրողություն։ Այս պարագայում բնական է, որ անհավատության յուրաքանչյուր դրսեւորում, աստվածհայհոյություն, հավատք օտար աստվածների նկատմամբ համարվում էր պետական հանցագործություն։ Քանի որ կրոնը երկար ժամանակ նաեւ հասարակական միավոր էր

---

[17] *Տե՛ս* А. Григоренко, Специфика религиозной толерантности, *էջ 13։*

[18] *Տե՛ս* М. Стецкевич, Свобода Совести, Санкт-Петербург, 2006, *էջ 14։*

եւ ապահովում էր պետական եւ ազգային համերշախություն ու միասնություն, ապա ցանկացած այլադավանություն համարվում էր վտանգավոր, որովհետեւ պետության եւ հասարակության միությանն ուղղված լրջագույն սպառնալիք էր։ Այսպիսով, մարդկության պատմությունը բավական ուշ հասավ այն ընկալմանը, թե անհրաժեշտ է, որ ազգերն ունենան հանդուրժող վերաբերմունք այլոց կրոնների եւ դրանց հետեւորդների նկատմամբ։ Իրավիճակն սկսեց փոխվել Արեւմտյան Եւրոպայից, երբ ի հայտ եկան այնպիսի մեծ մտածողներ (Ջոն Լոկ (1632–1704), Դեյվիդ Հյում (1711–1776), Իմանուիլ Կանտ (1724–1804) եւ ուրիշներ), որոնց ջանքերի շնորհիվ հասարակական կյանքում տեղ գտան եւ արմատացան փոխհանդուրժողական սկզբունքներն ու մոտեցումները։

Կրոնական հանդուրժողականության անհրաժեշտության գիտակցումով էր, որ 1965 թվականին Կաթոլիկ եկեղեցին Վատիկանի 2-րդ ժողովում ընդունեց 15 հոդվածներից բաղկացած «Հռչակագիր կրոնական ազատության մասին» փաստաթուղթը, որում հաստատվում են կրոնական հանդուրժողականության սկզբունքները որպես պայման ժամանակակից հասարակության մեջ կրոնի խաղաղ գոյության համար։ Այդ հռչակագրում մասնավորապես ասվում է հետեւյալը. «Տարբեր մշակույթի եւ կրոնի մարդկանց միջեւ միջազգային հարաբերությունների զարգացման համար, ինչպես նաեւ մարդկային ընկերակցության մեջ խաղաղ հարաբերություններ ու համերաշխություն հաստատելու եւ ամրապնդելու համար անհրաժեշտ է, որ ողջ աշխարհում կրոնական ազատությունն ապահովվի արդյունավետ օրենսդրական միջոցներով եւ որ պահպանվի մարդու բարձր իրավունքն ու պարտավորությունը՝ հասարակության մեջ կրոնական կյանքով ազատորեն ապրելու»[19]։

Այսպիսով՝ կրոնական հանդուրժողականությունն աչքի է ընկնում իր առանձնահատկությամբ, ինչի համար հարկ է նշել, որ «կրոնական հանդուրժողականություն» եզրույթն ունի իմաստային առավել ընդգրկուն շրջանակ եւ լինում է մի քանի տեսակի.

- *Առաջին, հանդուրժողականություն այլակրոնների միջեւ եղած հարաբերություններում (քրիստոնյա–մուսուլման, մուսուլման–բուդդիստ, քրիստոնյա–բուդդիստ եւ այլն)։*

---

[19] *Տե՛ս* Документы II Ватиканского собора, Москва, 2004, *էջ 336։*

• *Երկրորդ, հանդուրժողականություն տարբեր կրոնական հարանվանությունների ներկայացուցիչների միջեւ (կաթոլիկ–բողոքական, Հայոց Եկեղեցի – կաթոլիկ, բողոքական–ուղղափառ (քրիստոնեության մեջ) շիա-սուննի (իսլամում) եւ այլն)։*

• *Երրորդ, հանդուրժողականություն աղանդավորական շարժումների հետ հարաբերություններում (ինչպես նաեւ հանդուրժողականություն աղանդավորական շարժումների՝ մեկը մյուսի հետ հարաբերություններում)։*

• *Եւ, չորրորդ, հանդուրժողականություն Աստծուն հավատացողների եւ անհավատների միջեւ (հավատացյալ–անհավատ)[20]։*

Բ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԸ ԵՒ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեությունն այն միակ համաշխարհային կրոնն է, որ քարոզում է, թե Աստծու մարդացյալ Որդին՝ Քրիստոս խաչի վրա մահացավ բոլոր ժամանակների՝ անցյալի, ներկայի եւ ապագայի մարդկության համար[21]։ Հետեւաբար ճշմարիտ Քրիստոնեությունը սահմանում է սեր մերձավորի հանդեպ՝ նկատի ունենալով «մարդ» բառի լայն հասկացությունը։ Այս առումով քրիստոնեական հանդուրժողականությունը կտրականապես չի մերժում փրկության հնարավորությունը բոլոր այն մարդկանց համար, որոնք հավատում են այլ կերպ եւ նաեւ թույլատրելի է համարում միեւնույն եկեղեցում կամ կրոնական համայնքում այն մարդկանց ներկայությունը, որոնք միանման են կրոնական գլխավոր կետերում, սակայն անհամաձայն երկրորդական հարցերում[22]։

Աշխարհիկ մտածողության ընկալման մեջ հանդուրժողականության համար իբրեւ հիմնարար եւ առաջնային հիմք հանդիսանում է մարդկային համբերատարության զգացումը։ Թեպետ քրիստոնեական կյանքում առավել գործածական է համբերությունը դիտարկել որպես առաքինություն, բայց եւ այնպես վերջինս ոչ միայն չի արտացոլում աշխարհիկ հանդուրժողականության ողջ բովանդակությունը, այլեւ նույնիսկ որոշակի դեպքերում կարող է ուղղակիորեն հակադրվել դրան։ Հանդուրժո-

---

[20] *Տե՛ս* А. Симаворян, В. Овян, Релииозная толрантность в современном обществе, 21-й век информационно-аналитический журнал, № 1, Ереван, 2013, *էջ 85։*

[21] *Տե՛ս* Л. Карсавинь, *նշ. աշխ., էջ 7։*

[22] *Տե՛ս* А. Вульфиус, Очерки по истории идеи веротеримости и религиозной свободы в XVIII веке, Санкт Петербург, 1911, *էջ* V։

*ղականությունը, սովորաբար, ուղղված է այն ամենին, ինչը բացասական է ընկալվում։ Մենք հանդուրժում ենք այն, ինչին համաձայն չենք, այսինքն՝ ցուցաբերում ենք հանդուրժողականություն այն գործունեության կամ գաղափարախոսության նկատմամբ, որոնք տարբերվում են մերից։ Այսօրվա բարոյական հարաբերապաշտությունը (ռելատիվիզմը[23]) մեզ ուսուցանում է, որ հանդուրժողականության իմաստն վարվեցողական չեզոքությունն է. չեզոքություն մարդու բարոյական վարքագծի հանդեպ[24]։ Այսպիսի հանդուրժողականությունը քրիստոնեական բառապաշարի մեջ գոյություն չունեցող հասկացություն է։ Քրիստոնեական բարոյագիտության մեջ գոյություն ունի մի հին գերագույն-հիմնարար դրույթ (*maxima propositio*)՝ սիրի՛ր մեղավորին, սակայն ատի՛ր մեղքը։ Հետեւապես Քրիստոս մեզանից պահանջում է առավել մեծ բան քան՝ պարզապես համբերություն։ Նա պահանջում է մեզանից սեր։ Այս տեսանկյունից, իրապես, հանդուրժողականությունը հանդես է գալիս որպես անտարբերության տեսակ։ Ինձ չի հետաքրքրում, թե ի՛նչ է անում այդ մարդը, մինչեւ այն պահը, երբ այդ ամենը առնչվում է ինձ կամ իմ երեխաներին» սա մեկը մյուսից տարածական հեռավորություն պահելու միջոց է, ժամանակակից հասարակության հյուլեացման ձեւ»[25], երբ անկում է ապրում ավանդական շփումը եւ մարդիկ հեռանում են միմյանցից։ Քրիստոնեական պատգամն է, որ մենք պետք է կարեւոր լինենք մեկս մյուսի համար, այլ ոչ թե՝ անտարբեր։ Այս իմաստով համբերությունը՝ իբրեւ առաքինություն, մարդ արարածի մեջ ի բնե կնքված կարողություն է եւ, ի տարբերություն հանդուրժողականության, կրավորական վիճակ չէ, այն չի նշանակում սոսկ զսպում իր բացասական վերաբերմունքի, զգացումների, ինչի դեպքում ոչ մի կերպ չի փոխվում մարդու անհանդուրժող դիրքորոշումը։ Քրիստոնեական տեսանկյունից համբերությունը չի կարող չեզոք լինել բարու եւ չարի առնչությամբ։ Նրա նպատակն է պաշտպանել բարին եւ կանխել չարը։ Նշանավոր եկեղեցական*

---

[23] *Ռելատիվիզմը իդեալիստական փիլիսոփայական ուսմունք է, որը չի ընդունում իրականության օբյեկտիվ ճանաչողության հնարավորությունը եւ բացարձակ ճշմարտությունների գոյությունը, այլ ամբողջ ճանաչողությունը համարում է հարաբերական։ (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. 4, Երեւան, 1980, էջ 251)։*

[24] *Տե՛ս* William Bell, Dimensions of Tolerance, *էջ 175։*

[25] *Տե՛ս* Протодиакон Андрей Кураев, Толерантность-форма равнодушия, https://www.pravmir.ru/tolerantnost-forma-ravnodushiya/

հեղինակ Տերտուղիանոսն իր՝ «Համբերության մասին» աշխատության մեջ համբերությունը սահմանում է որպես աստվածային սկիզբ եւ այն անմիջականորեն միահյուսված է համարում մարդու հավատքին[26]։ Քրիստոնեական համբերատարության գիտակցությամբ լցված մարդն ունակ է սխրանք գործելու, նա գիտի, որ համբերությունը ինքնանպատակ չէ, այն հստակ նպատակակետ ունի, միտված է շահել ամենքին՝ ուղղորդելով նրանց բարօր եւ առաքինի ընթացքով։ Մեր վաստակաշատ եկեղեցական գործիչներից երջանկահիշատակ Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցին պարզորոշ կերպով սահմանում է համբերությամբ գործելու շարժառիթները. «Մարդ պետք է համբերի աստվածասիրության համար, երբ Աստծու անվան փառավորման հույս կա, եղբայրասիրության համար, երբ դրանով քո եղբորն օգուտ ես տալիս, եւ ազգասիրության համար, երբ ողջ ազգը բարեհամբավ է դառնում»[27]։

Քրիստոնեական Եկեղեցու պատմության մեջ առաջին երեք դարերն ավելի շատ ուշագրավ են այս աշխարհում իր տեղը նվաճելու համար Եկեղեցու պայքարի ընթացքով։ Աշխարհն ատում էր եւ հալածում քրիստոնյաներին։ Սակայն Եկեղեցին ամրապնդվում է այս աշխարհում նախ բազում նշանների եւ հրաշքների օգնությամբ, այնուհետեւ Քրիստոսի անվան համար անվեհեր նահատակների շնորհիվ։ Եւ վերջապես, Քրիստոնեությունը հաղթանակի հասավ հուդայականության, հեթանոսության, հին աշխարհի զորեղ պետության եւ նրա ողջ մշակույթի նկատմամբ միայն հավատքի ու սիրո բարոյական կարողությամբ եւ համբերության միջոցով։ Սա իրապես պատմության վեհ տեսարաններից մեկն է եւ Քրիստոնեության աստվածային բնույթ ունենալու վերաբերյալ հաստատուն փաստ[28]։ Ուստի կարելի է նշել, որ շուրջ երեք դար շարունակ հենց Քրիստոնեության եւ իր հետեւորդների նկատմամբ ողջ աշխարհն անհանդուրժող էր։ Սակայն արդեն 4-րդ դարում քրիստոնեական Եկեղեցու կացությունը կապված արտաքին աշխարհի՝ հատկապես պետության հետ, արմատապես փոխվեց։ Քրիստոնեությունը հալածական կրոնից դարձավ ոչ միայն հանդուրժելի եւ հավասարազոր մյուս կրոններին,

---

[26] *Տե՛ս* Квинт Стептимий Флорент Тертуллиан, Избранные сочинения, Москва, 1994, *էջ 325։*

[27] Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցի, *Խրատի թանգարան, 6-րդ հրատ., Սբ. Էջմիածին, 2015 թ, էջ 217։*

[28] *Տե՛ս* М. Поснов, История Христианской Церкви, *էջ 85։*

այլեւ պետական կրոն։ Հետեւապես, երբ խոսվում է քրիստոնեական կրոնի հանդուրժող լինելու վերաբերյալ, ապա հարկ է վերհիշել պատմական այն փաստը, որ քրիստոնեական հավատքն ազատ դավանելու իրավունքը Եկեղեցին ձեռք բերեց միայն 313 թ., երբ Կոստանդիանոս եւ Լիկիանոս կայսրերը հռչակեցին Միլանի հրովարտակը. «Մարդկանց մեծամասնության օգտակարության համար մենք որոշեցինք, որ նախ եւ առաջ նկատի պետք է առնել նրանց շահերը, որոնք պահում են աստվածապաշտությունը, ըստ որի՝ մենք պարգեւում ենք հնարավորություն քրիստոնյաներին եւ բոլորին ազատորեն հետեւելու այն կրոնին, որին որ ցանկանում են... որպեսզի քրիստոնյաները զրկված չլինեն ազատ եւ առանց որեւէ սահմանափակման իրենց կրոնը պաշտելու հնարավորությունից»[29]։ Այս մեջբերումը ցույց է տալիս, որ Միլանի հրովարտակի կազմողներն առաջնորդվել են ավելի շուտ հանդուրժողական պատկերացումներով։ Ուստի կարելի է արձանագրել, որ անհանդուրժողական կացության մեջ հայտնված ի փորձառության ճանաչողությունն ամենեւին խորթ չէ քրիստոնեությանը։

Երբեմն եկեղեցական միջավայրում գոյություն ունի նաեւ քրիստոնեական հանդուրժողականության վերաբերյալ մի տեսակետ, որը այն դիտարկում է իբրեւ կեղծ, բացասական արժեք։ Մինչդեռ վերջինիս ձգտումն առ խաղաղություն, սեր մերձավորի հանդեպ, դիմացինի նկատմամբ վստահություն եւ նման որակներ՝ չի կարող հակառակ լինել քրիստոնեական հավատքին։ «Հանդուրժողականություն» հասկացությունը որպես եզրույթ եւ՛ եկեղեցական, եւ՛ աշխարհիկ կյանքի համար համեմատաբար նոր է, սակայն որպես գաղափար այն նորույթ չէ քրիստոնեական մշակույթի համար։ Ցավոք սրտի, «քրիստոնեական հանդուրժողականություն» արտահայտության ներքո շատ հաճախ գիտակցվում է անտարբերություն հավատքի հարցերի վերաբերյալ, անհետաքրքրություն, ինչը նաեւ անտարբերություն է ենթադրում արդարության, բարոյականության խնդիրների նկատմամբ։ Նման երեւույթի ոչ ճիշտ ընկալումը, ինչպես նաեւ սխալ բառօգտագործումը հարաբերությամբ շաղկապված է այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են

---

[29] Տե՛ս Лактанций, О смертях преследователей, перевод с латинского языка, вступительная статья, комменрарии, указатель и библиографический список В. Тюленева, Санкт-Петербург, 1998, էջ 245, 246։

ազատականությունը, մարդասիրությունը, մարդու իրավունքները, ժողովրդավարությունը եւ այլն։ Այդպիսի ըմբռնման տակ թաքնված է ոչ միայն աշխարհիկ ազատական-մարդասիրական ակունքների, այլեւ՝ Եկեղեցու ողջ պատմության չմացությունը։ Անշուշտ, ներկա ժամանակներում բավական դժվար է հավասարակշռություն պահպանել մի կողմից ժողովրդավարական սկզբունքների, մարդու իրավունքի, ազատության, իսկ մյուս կողմից՝ քրիստոնեական մշակույթի եւ դրա արժեքների միջեւ։ Սակայն այս ամենը վկայում է, որ հասարակությունը կարիք ունի կրթության, բայց ոչ բացարձակ աշխարհիկ կրթության, այլ այնպիսի, ուր կրոնական տարրն զբաղեցնում է իր պատշաճ տեղը։ Խոսքը չի վերաբերում կրոնական քարոզին կամ կրոնի ուսուցմանը, այլ լուրջ ծանոթություն Քրիստոնեության հետ, որը հանդիսանում է մշակույթի պատմական հիմքը։ Այդպիսի ծանոթության հիմնական սկզբունքը պետք է լինի քրիստոնեական հանդուրժողականության դաստիարակումը, կրոնական բազմազանության փաստի գիտակցումը։ Այս հարցում կարեւոր է համարվում միջհարանվանական եւ միջկրոնական համագործակցությունը։ Եւ այդ համագործակցությունը պետք է ողջ աշխարհին փաստի այն մոտեցումը, որի շնորհիվ հարգվում ու պահպանվում են կրոնական հարանվանությունների ազգային արժեքները եւ այլախոհների ու այլահավատների հետ երկխոսության կարիք է զգացվում[30]։ Քրիստոնեական տարբեր հարանվանություններին միավորելու եւ մերձեցնելու նպատակով Ի. դարում ի հայտ եկավ էկումենիզմը (հուն. οἰκουμένη – աշխարհ, տիեզերք) իբրեւ միջքրիստոնեական հարաբերությունները կարգավորող համակարգ եւ համաքրիստոնեական միության հասնելու գաղափարախոսություն։ Էկումենիկ շարժման այդպիսի կազմակերպություններից է նաեւ 1948 թվականին հիմնադրված «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը», որին անդամակցում են շուրջ 350 քրիստոնեական Եկեղեցիներ ավելի քան 100 երկրներից։

Կրոնական տեսանկյունից բազմազանությունը իրականությունն ընդունելու եւ ճանաչելու կերպ է, գիտակցում այն բանի, որ գոյություն ունեն այլ համոզմունքների, այլ հավատքի տեր մարդիկ։ Եւ եթե ցան-

---

[30] *Տե՛ս* Протоиерей Владимир Федоров, Экуменическое сотрудничество как воспитание толерантности/Толерантность и интолерантность в современном обществе и различное, Санкт-Петербург, 2006, *էջ 196 (այսուհետ՝* Протоиерей Владимир Федоров, *նշ. աշխ.)։*

կանում ենք, որ մեր հավատքի բովանդակությունը կիսեն, մեզ հարգեն ու համագործակցեն մեզ հետ, հարկավոր է պատրաստ լինել բաց երկխոսության, վստահել զրուցակցի անկեղծությանը, որը գալիս է քեզ ընդառաջ[31]։ Այժմ թերեւս, տեղին է մեջբերել, իտալացի հայտնի գրող եւ պատմաբան Ումբերտո Էկոյին. «Համբերատարության վարժեցնել այն հասուն մարդկանց, որոնք կրակում են միմյանց վրա ազգային, ցեղային եւ կրոնական պատճառներով, միայն ժամանակի կորուստ է։ Սա նշանակում է, որ այդ վայրենի անհանդուրժողականության դեմ պետք է պայքարել հենց հիմքից՝ սկսելով հաստատուն ջանքերով դաստիարակությունը անմիջականորեն մանկությունից՝ նախքան անհատի որեւէ գիրք կարդալը»[32]։ Հարկ է խոստովանել, որ այս խոսքերում առկա է չափազանցության տարրը։ Սակայն քրիստոնեական գործնական կյանքը ցույց է տալիս, որ մեղսալի կյանքից, ստից, խավարից դեպի լույս դառնալը հնարավոր է յուրաքանչյուր տարիքում, եւ հարկավոր է բոլորին օգնել այդ հարցում։

Դեռեւս Բ. դարում Սբ. Իգնատիոս Անտիոքացին իր նամակներից մեկում խնդրում է եփեսացի քրիստոնյաներին անդադար աղոթել անհավատների եւ մոլորյալների համար. «Արդարեւ, նրանց մեջ ներկայ է դարձի մի յոյս, որպէսզի հանդիպեն Աստծուն։ Թոյլ տուէք նրանց ուսուցումներ գտնել գոնէ ձեր գործերի միջոցով։ Նրանց ցասման դիմաց դուք հեզ եղէք, նրանց պարծենկոտութեան դիմաց դուք եղէք խոնարհ, նրանց անարգանքներին հակադրէք ձեր աղօթքները, նրանց սխալների դիմաց դուք հաստատուն մնացէք հաւատքի մէջ»[33]։ Առաջին քրիստոնյաները չէին մերժում ամուսնական հարաբերությունները նրանց հետ, որոնք չէին դավանում քրիստոնեական հավատքը։ Նրանք օգնություն էին ցուցաբերում հեթանոս կարիքավորներին։ Սակայն հասարակության մեջ այսպիսի գերակայության հասնելու համար հարկավոր է կրթական համակարգ եւ հոգեւոր մշակույթ այդ կրթության մեջ։ Եւ այս առումով Քրիստոնեական եկեղեցիները կարող են շատ քայլեր կատարել կրոնական դաստիարակության եւ համամարդկային հանդուրժողականության համար։

---

[31] *Տե՛ս նույն տեղում։*

[32] *Տե՛ս* Умберто Эко, Пять эссе на темы этики, Санкт-Петербург, 2003, *էջ 147։*

[33] Սբ. Իգնատիոս Անտիոքացի, *Նամակներ, թարգմանեց Մաշտոց Վահէ Ղազարեանը, Երեւան, 2011, էջ 54։*

Գ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՇԻ «ԹՈՒՂԹ ԱՌ ՎՐԱՑԻՍՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայ իրականության մեջ քրիստոնեական հանդուրժողականությանն առնչվող արժեքավոր երկերից է մեծանուն եկեղեցական գործիչ Մխիթար վարդապետ Գոշի «Թուղթ առ վրացիսն» աշխատությունը, որը տվյալ ժամանակաշրջանի համար իր քրիստոնեական սիրո ու համերաշխության բացառիկ եւ եզակի նմուշներից է։ Դեռեւս ԺԲ. դարի վերջերին հայ-վրաց ժողովուրդների միջեւ նոր փուլով զարգացող եկեղեցական շփումները՝ կապված քաղաքական եւ ռազմական համագործակցության հետ, ի հայտ են բերում նաեւ միմյանց միջեւ առկա տարաձայնություններ՝ զանազան ծիսական եւ դավանաբանական հարցերի շուրջ։ Այդ անհամաձայնություններին գումարվելու են գալիս բազմաթիվ մեղադրանքներ, «որոնք ավելի թյուրիմացության արդյունք են եղել եւ բորբոքել են կրոնական անհանդուրժողականությունը»[34]։ Եւ այդ անհանդուրժողականությունը եղել է ամենալուրջ խոչընդոտներից մեկը հայ եւ վրաց Եկեղեցիների միջեւ առկա հարաբերությունների բարելավման ճանապարհին։ Ելնելով եկեղեցաբանական կառուցվածքից եւ ունենալով քրիստոնեական միության վերականգնման հարցերի վերաբերյալ իր ուրույն պատկերացումը՝ Վրաց Եկեղեցին ջանք էր թափում հայերին դեպի քաղկեդոնականություն տանելու ուղղությամբ։ Եւ այդ նպատակաուղղված հավատորսության արդյունքում հայ իրականության մեջ առաջ են գալիս որոշ վրացադավան եկեղեցիներ[35], որոնք դավանում էին քաղկեդոնականություն, սակայն, հավանաբար, պահպանել էին հայկական եւ հայալեզու կարգերն աստվածապաշտական արարողություններում։ Այսպիսի պատմական համապատկերում Մխիթար Գոշը շարադրում է «Թուղթ առ վրացիսն» աշխատությունը՝ նպատակ ունենալով իր այս գրությամբ հանդարտեցնել հայոց եւ վրաց միջեւ սկիզբ առած անհանդուրժողական կրքերն ու կեցվածքը։ Անշուշտ, անհանդուրժողականություն հասկացու-

---

[34] ԵՂՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *Հայ եկեղեցու պատմություն, էջ 150։*

[35] *Մեծավ մասամբ հայկական եկեղեցիները վերածվում էին վրացական եկեղեցիների, ինչպես օրինակ՝ Իվանե Զաքարյան իշխանի պարագան. նա դարձել էր վրացադավան եւ, համաձայն պատմիչ Կիրակոս Գանձակեցու, մահանալուց հետո թաղվել Ախթալայի վանքում, «զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց», տե՛ս* ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ Կ Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 222։*

թյունը հաճախ չի ըմբռնվել միանշանակ կերպով, քանի որ այն երբեմն ունեցել է մշակութային եւ քաղաքական հնչերանգ կամ իմաստ, ինչին ականատես ենք դառնում Գոշի այս երկում։

Իր ջատագովական գրության նախաբանում, որը նախեւառաջ հասցեագրված էր հայոց իշխաններ՝ Զաքարե եւ Իվանե Զաքարյան եղբայրներին, Գոշը հստակորեն ընդգծում է իր մտահոգությունն ընդդեմ Հայ Եկեղեցու տարվող վրացական քարոզչության առնչությամբ։ Մասնավորապես զորավար եղբայրներին դիմելով՝ Գոշը գրում է. «Յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց Եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէր հոգի, մանաւանդ զի հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»[36]։ Այս տողերով նշանավոր վարդապետը արտահայտում է իր ներքին զայրույթը եւ հոգեկան խռովքը ստեղծված անհանդուրժող իրավիճակի վերաբերյալ, հատկապես այն պատճառով, որ հայոց հավատի դեմ ուղղված վրաց մեղադրանքները՝ իբրեւ հայերը չեն կամենում միության գալ վրաց կամ հույն Եկեղեցիների հետ, կարծես սկսել էին Զաքարյան եղբայրների հավանությանն արժանանալ։ Մինչդեռ Գոշը շատ պարզորոշ գրում է. «Եւ զոր ամբաստանիմք, թէ ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս՝ ցուցանել փութացաք զանհնարութիւն... զի կարի յանդգնութիւն է մկրտել զՀայ կամ զՅոյն եւ զՎրացի»[37]։ Միանգամայն հստակ է Գոշի դիրքորոշումն այս հարցում՝ անկարելի է միություն այն պայմաններում, երբ Հայ Եկեղեցու հետեւորդը համարվում է հերձվածող եւ կրկնամկրտվում է Վրաց Եկեղեցում, ինչը, ըստ էության, ոչ թե տվյալ անձի սրբագործում է, այլ խիստ անարգանք աստվածային սուրբ Խորհրդի նկատմամբ։ Այլ խոսքով՝ Եկեղեցիների միջեւ միության երկխոսություն հնարավոր է լոկ այն դեպքում, երբ կողմերը կհարգեն միմյանց կարգերն ու ավանդույթները։ Ուստի հանդարտեցնելու համար երկու ժողովուրդների միջեւ առկա «զսաստկացեալ պատերազմ հայհոյութեան», Գոշը դիմում է Զաքարյան եղբայրներին՝ Հայ Եկեղեցու դավանության եւ կարգերի վերաբերյալ իր այս գրությունը վրացերեն թարգմանելու եւ վրաց կաթողիկոսին փոխանցելու խնդրանքով[38]։

---

[36] Պ. Մուրադյան, *ԺԱ.–ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը*, Սբ. Էջմիածին, 2011, էջ 196։

[37] Տե՛ս նույն տեղում։

[38] Տե՛ս նույն տեղում, էջ 197։

Մոռացության պետք չէ տալ ամենաէական կետերից մեկը՝ ինչո՞վ է տարբերվում Մխիթար Գոշի Թուղթն այն մատենագրական երկերից, որոնցից օգտվում է կամ որոնց ի պատասխան գրում է մեծանուն հայ վարդապետը։ Մխիթար Գոշին նախորդած հայ եկեղեցական մատենագիրները, որոնց երկերից նա օգտվել է, իբրեւ կանոն, մշտապես ջանացել են ցույց տալ, որ Հայոց Եկեղեցու դավանությունը եւ ծիսակարգն անշեղորեն պահպանել են ուղղափառությունը, եւ ըստ այդմ հերձվածողներ կարելի է համարել Քաղկեդոնի ժողովի հետեւորդներին։ Գոշը նույնպես պաշտպանում է հակաքաղկեդոնական Եկեղեցու ուղղափառությունը, բայց եւ քաղկեդոնականությունը հերձված չի համարում. «Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Հոռոմք ճշմարիտ Սուրբ զԵրրորդութիւն խոստովանին եւ զՔրիստոս Աստուած՝ ճշմարիտ Որդի Աստուծոյ»[39]։ Բացի այս՝ Գոշը համարձակորեն ու անաչառորեն ընդունում է, որ Հայոց Եկեղեցում, ինչպես բոլոր քրիստոնեական Եկեղեցիներում, նույնպես գոյություն ունեն խոտելի ու մերժելի երեւույթներ, ինչպիսիք են՝ ձեռնադրության դիմաց գումար վճարելը, պահքը չլուծելու պատճառով սրբերի հիշատակը չտոնելը եւ այլն, սակայն այս ամենով հանդերձ «չտեսանեմք այնքան պատճառս, որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ»[40]։

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաեւ Վրաց Եկեղեցուն եւ մասնավորապես վրաց կաթողիկոսին հղված Գոշի նամակն իբրեւ առաջադիր գրություն իր բուն «Թղթի», որն աչքի է ընկնում իր խաղաղասիրական ու համերաշխության կոչերով. «Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրաւն լինէր, բայց տեսաք, որ սատանայ եւ ամբարտաւանութիւնն մեր զայդ չտայ առնել՝ լաւ համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զխաչ եւ զեկեղեցի միմեանց չանարգեմք, զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ անարգանք է»[41]։ Գոշն իր գեղեցիկ եւ նրբանկատ ոճով, ըստ էության, սահմանում է քրիստոնեական հանդուրժողականությունը, ըստ որի՝ աստվածհաճություն է բոլոր ազգերի՝ Տիրոջով մեկ լինելը, սակայն մեր մարդկային մեծամտությունը եւ մարդկանց կողմից չարի կամքի սպասարկումը չարտոնեց այդ իրագործել, հետեւապես եթե մենք՝ հայ եւ վրաց ժողովուրդները կամենում ենք հասնել այդ կորսված

[39] Տե՛ս նույն տեղում, էջ 261։
[40] Տե՛ս նույն տեղում, էջ 253։
[41] Տե՛ս նույն տեղում, էջ 198։

եւ փափագելի իրականությանը, ապա նախեւառաջ հարկ է դադարեցնել թշնամանքն ու անարգանքը միմյանց եկեղեցիների եւ կարգերի նկատմամբ, քանզի այդ ամենը միեւնույն ժամանակ անարգանք է մեր Տիրոջ՝ Քրիստոսի նկատմամբ։

Հիրավի, իրավիճակն այն աստիճան էր ահագնացել, որ վրացիներն սկսել էին անգամ հայկական եկեղեցիները պղծել՝ քանդում էին պատարագամատույց սուրբ սեղանները, դուրս էին նետում դրանք՝ ասելով, թե իբրեւ հայերն այնտեղ շան զոհաբերություն են կատարում[42]*։ Այստեղ Գոշը, կարծես թե, անհանդուրժողականությունը քրիստոնյաների միջեւ, որը տվյալ պարագային արտահայտվում է հայոց եկեղեցիների նկատմամբ իրականացվող սրբապղծությամբ, դիտարկում է ուղղակիորեն անպատվություն Աստծու նկատմամբ։ Ուստի այս ամենը բերում է նաեւ ազգամիջյան անհանդուրժողականության, քանի որ հայկական եկեղեցիների պղծումը եւ հայադավան հետեւորդին՝ որպես հերձվածողների վերամկրտումը Վրաց Եկեղեցում, կարող է «պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան», մինչդեռ մենք պետք է գործենք մեր ժողովուրդների «առաւել շինութեան եւ խաղաղութեան» համար։ Այդ պատճառով Գոշը հանձն է առնում գրելու իր այս Թուղթը՝ ներկայացնելու համար Հայ Եկեղեցու «զճշմարիտ խոստովանութիւնն», որպեսզի Հայոց հավատքի եւ կարգերի վերաբերյալ վրացիները գիտելիք ունենան ոչ թե տարատեսակ բամբասանքներից, այլ անձամբ իրենից՝ Հայ Եկեղեցու վարդապետից։ Գոշն այնքան լրջությամբ է մոտենում իր անձի վրա դրված այս պատասխանատվությանը, որ այդ մասին խստորեն գրում է. «Եւ զոր գրեմք ի թղթի վասն Հայոց խոստովանութեան՝ ճշմարտութեամբ այդպէս է, եւ դատիմ ի Տեառնէ, թէ վասն Հայոց երեսաց ես սուտ ինչ գրեալ եմ»*[43]*։ Այո՛, միանգամայն ճիշտ է Գոշի մոտեցումը՝ երկխոսություն սկսել Վրաց Եկեղեցու հետ հենց Հայոց եկեղեցական դավանանքի եւ կարգերի ճանաչողությունից, քանի որ տարբեր դավանանք ունեցող քրիստոնյաների միջեւ առկա երկխոսության առանձնահատկությունն իրենց աստվածաբանական բնութագիրն է։ Հետեւապես աստվածաբանական երկխոսության առաջադրանքն է բացատրել այլադավանին Հայ Եկեղեցու եկեղեցաբանական ինքնագիտակցությունը, իր դավանանքի հիմքերը, կանոնախմ-*

---

[42] *Տե՛ս նույն տեղում, էջ 254։*
[43] *Տե՛ս նույն տեղում, էջ 198։*

բերը եւ հոգեւոր ավանդոյթները՝ ցրելու համար գոյություն ունեցող թյուրըմբռնողությունն ու կաղապարները։ Գոշը Հայոց դավանանքի վերաբերյալ տալիս է հետեւյալ ձեւակերումը. «Հայք ճշմարիտ խոստովանողք են Քրիստոսի տնաւրէնութեանն եւ Քրիստոսի Աստուածութեանն եւ Ամենասուրբ Երրորդութեանն... այլ ինչ սակաւ բաժանումն տաւնի կամ պահոց, կամ կերակրոց՝ չէ հաւատոյ բաժանումն»[44]։ Հայ Եկեղեցին ունի ուղղափառ դավանանք, իսկ տոների, պահքի եւ առհասարակ եկեղեցական կարգերի միջեւ առկա տարբերություններն ամենեւին դավանանքի հետ առնչություն չունեն, ուստի երբ անգիտաբար հանդգնում են կատարել կրկնամկրտություն՝ «Վրացի զՀայ մկրտէ եւ կամ թէ Հայ զՎրացի, զո՞ր Քրիստոս տայ թողուլ եւ կամ զո՞ր խոստովանիլ, զի մի է Քրիստոս եւ ոչ երկու, զի մի հաւատ եւ մի մկրտութիւն քարոզի ի Գրոց»[45]։ Այս խնդրի կապակցությամբ հայոց վարդապետի բերած փաստարկներն ու հիմնավորումները միանգամայն տրամաբանական են եւ համոզիչ, որոնք հիմնահատակ քանդում են Վրաց Եկեղեցու բոլոր մեղադրանքները։

Գոշն իրավացիորեն կատարում է հետեւյալ դիտարկումը՝ ասելով. «Մի՞թէ ընդ յամենայն աշխարհ Հայ միայն է, կամ՝ Վրացի եւ կամ՝ Հոռոմ։ Քրիստոս չէ նախանձոտ. Նա զամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւն զուռկանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց ըմբռնին»[46]։ Այո՛, Քրիստոս ընդունում է բոլորին եւ այդ պատճառով Տերն Աստծու արքայությունը նմանեցրեց ձկնորսական ուռկանի, որի մեջ ամեն տեսակի ձուկ բռնվում է։ Հետեւապես Գոշը վրդովված նկատում է, թե ինչպե՞ս կարող է Աստված ներում շնորհել այն քրիստոնյային, որն ասում է՝ տաճիկը կամ հրեան ավելի լավն են, քան հայը։ Այսպես ասողները, եթե չապաշխարեն, թողություն չեն ունենա, քանի որ բոլոր քրիստոնյաները եղբայր են միմյանց։ Սա, իրապես, համաքրիստոնեական սիրո գաղափարի կոչ է, ըստ որի՝ Քրիստոսի Եկեղեցու միությունը սիրո միասնականության մեջ է[47]։

Բայց եւ այնպես ստեղծված այս լարված իրավիճակի համար հարկավոր է ելք գտնել, եւ իրատես Գոշն իրեն պարտավոր է զգում՝ ասելու, թե՝«զի՞նչ այժմ հնարաւոր է լինել ազգաց»։ Իր լայնախոհությամբ Հայոց վարդապետն այս խնդրի լուծումը տեսնում է միայն նոր տիեզերաժողո-

---

[44] Տե՛ս նույն տեղում, էջ 262։
[45] Տե՛ս նույն տեղում, էջ 199։
[46] Տե՛ս նույն տեղում, էջ 264։
[47] Տե՛ս Л. Карсавинъ, Католичество, էջ 15։

վի գումարմամբ, սակայն «բարձան բարեպաշտ թագաւորքն Յունաց եւ Հոռոմոց, զի նոքաւք լինէր տիեզերական ժողովն»[48]։ Սակայն Գոշի համոզմամբ՝ վրաց թագավորները նույնպես նախանձախնդիր են հայ եւ վրաց քրիստոնյաների միջեւ սիրո ու խաղաղության հաստատմանը, թեպետ Թամար թագուհին եւ Դավիթ թագավորը «չեն բաւական տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց, այլ... Աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց եւ զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ զՔրիստոս չհայհոյեն, զի այն Քրիստոսի է ատելութիւն եւ թշնամութիւն, որ զխաչ եւ զհաւատ եւ զեկեղեցի միմեանց հայհոյեն եւ նախատեն»[49]։ Այնուհետեւ դիմելով զորավար եղբայրներին՝ գրում է. «Եւ դուք բաւական էք զսաստկացեալ պատերազմդ հայհոյութեան շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանելի բանիւ, թէպէտ եւ անհնար ցուցաք զժողովն լինել զմիաբանութիւն... զի դուք իշխանք էք Հայոց եւ Վրաց կամաւքն Աստուծոյ եւ թէ կամիք՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն, որ զեկեղեցի Հայոց չքակեն եւ զխաչ չայրեն»[50]։

Այսպիսով՝ ԺԲ.–ԺԳ. դարերի հայ նշանավոր վարդապետի՝ Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թղթի՝ քրիստոնեական հանդուրժողականության հանգուցալուծման տեսանկյունից կատարված քննությունը մեզ մղում է կատարել մի քանի կարեւոր սկզբունքային եզրահանգումներ.

Ա. Իբրեւ առաջին քայլ՝ դադարեցնել որեւէ քրիստոնեական եկեղեցու ուղղված թշնամանքի եւ հայհոյանքի կոչերը։

Բ. Սկսել երկխոսություն՝ բաց լինելով կրոնական բազմաբնույթ հարցերի քննարկման համար։

Գ. Փոխադարձ հարգանքով վերաբերվել Քրիստոնեական Եկեղեցիների տեղական կարգերին ու ավանդություններին։

Դ. Քրիստոնեական ցանկալի համերաշխության հասնելու նպատակով ներառել աշխարհիկ իշխանությունների միջամտությունն ու աջակցությունը։

Ե. Փոխհանդուրժողականության վերջնական համաձայնության գալ համընդհանուր քրիստոնեական ժողովի միջոցով։

---

[48] Պ. Մուրադյան, *ԺԱ.–ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը*, էջ 252։

[49] Նույն տեղում, էջ 265։

[50] Նույն տեղում, էջ 197, 265։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մխիթար Գոշ, Թուղթ առ վրացիսն, քրիստոնեական հանդուրժողականություն, միջնադարյան Հայաստան, Հայ Եկեղեցի, Վրաց Եկեղեցի, դավանաբանական տարբերություններ, եկեղեցական երկխոսություն, կրոնական համերաշխություն, քաղկեդոնականություն, վերամկրտություն, սիրո պատվիրան, միջեկեղեցական հարաբերություններ, երկխոսության մշակույթ

РЕЗЮМЕ

В работе рассматривается христианская толерантность в историческом, теоретическом и практическом аспектах. Основное внимание уделено трактату армянского богослова и правоведа Мхитара Гоша «Послание к грузинам», в котором автор выступает с призывом к межцерковному диалогу, уважению обрядовых различий и прекращению взаимных обвинений. Гош осуждает религиозную нетерпимость, проявляемую в адрес Армянской Церкви, но, оставаясь в духе христианской любви, призывает к примирению. Текст иллюстрирует, что еще в средневековье в армянской мысли присутствовали идеи религиозного терпения, уважения и стремления к единству.

SUMMARY

This work examines Christian tolerance from historical, theoretical, and practical perspectives. The main focus is on the treatise by Armenian theologian and jurist Mkhitar Gosh, “Letter to the Georgians,” in which the author calls for interchurch dialogue, respect for ritual differences, and an end to mutual accusations. Gosh condemns religious intolerance towards the Armenian Church but, remaining in the spirit of Christian love, responds not with hostility, but calls for reconciliation. The text illustrates that even in the Middle Ages, Armenian thought was imbued with ideas of religious tolerance, respect, and the pursuit of unity.